Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2018 թվականի ապրիլի 16-ից 18-ը ք.Մոսկվա գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Դավիթ Մելքոնյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության փոխադրումների քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ,

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ռուսաստանի Դաշնության քաղաք Մոսկվա, 2018թ. ապրիլի 16-ից 18-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարություն:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն միջազգային ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում ռուս-հայկական համատեղ հանձնաժողովի հերթական նիստին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

Միջազգային ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում ռուս-հայկական համատեղ հանձնաժողովի հերթական նիստի ընթացքում քննարկվել է՝

- Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև միջազգային ավտոմոբիլային փոխադրումների առկա իրավիճակը,
- Ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների (դեպի երրորդ երկիր/երրորդ երկրից) թույլտվությունների չափաքանակի համաձայնեցման հարցը,

- Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև միջպետական ավտոբուսային ուղևորափոխադրումների իրականացման հարցերը,
- 2018 թվականին Ռուսաստանի Դաշնությունում Ֆուտբոլի աշխարհի առաջնության անցկացման ժամանակ ուղևորափոխադրումների իրականացման կարգը,
- Այլ հարցեր:

♦ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միջոցառման ընթացքում պատվիրակությունները փոխանակեցին Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ միջպետական բեռնափոխադրումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Կողմերը արձանագրեցին, որ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրման ծավալը 2017 թվականին կազմել է 1 մլն. տոննա, այն 2016 թվականի համեմատ աճել է 61%-ով: Աճ է արձանագրվել նաև ներմուծման և արտահանման բնագավառում: 2017 թվականին հայկական փոխադրողների կողմից իրականացված փոխադրումների ծավալները աճել են և կազմել 66%, իսկ Ռուսասատանի Դաշնության փոխադրողներինը կազմել է 32.8%, այլ երկրների փոխադրողներինը կազմել է մոտ 1%: Աճի տենդենցը շարունակվում է նաև 2018 թվականին:
2. Պատվիրակությունները տվյալներ փոխանակեցին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կողմից 2017 և 2018 թվականներին փոխադրողների կողմից օգտագործված թույլտվությունների վերաբերյալ:

   Արդյունքում ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ՝
   - 2018 և 2019 թվականներին դեպի երրորդ երկիր և երրորդ երկրից միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների չափաքանակը սահմանել 700 հատ (նախկին 400-ի փոխարեն): 2018 թվականի լրացուցիչ թույլտվությունների փոխանակումը իրականացնել մինչև հունիսի 1-ը:
   - Հիմք ընդունելով Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև ստորագրված <<Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին>> համաձայնագրի (ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 27-ին) 4-րդ հոդվածի պահանջները կողմերը պայմանավորվեցին 2018 և 2019 թվականներին

միջպետական ոչ կանոնավոր երկկողմ և տարանցիկ ուղևորափոխադրումների թույլտվությունների չափաքանակը սահմանել 50 հատ: 2018 թվականի թույլտվությունների փոխանակումը իրականացնել մինչև հունիսի 1-ը:

- Կողմերը թույլտվությունների գործողության ժամկետ սահմանեցին ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:
- Լրացուցիչ թույլտվությունների փոխանակման անհրաժեշտության դեպքում հարցը քննարկել աշխատանքային կարգով:

3. Կողմերը պայմանավորվեցին խթանել միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների զարգացմանը՝ համարելով այն առաջնային:

Կողմերը քննարկեցին նաև նույն ուղղությամբ մեկից ավել միջպետական կանոնավոր երթուղիների շահագործման նպատակահարմարության հարցը:

4. Ռուսական կողմը ներկայացրեց 2018 թվականին Ռուսաստանի Դաշնությունում ֆուտբոլի աշխարհի առաջնության անցկացման ժամանակ Ռուսաստանի Դաշնության Նախագահի 2017 թվականի մայիսի 9-ի №202 հրամանագրի և 2017 թվականի նոյեմբերի 27-ի Ռուսաստանի Դաշնության կառավարության №1426 որոշման պահանջներին համապատասխան ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերի անցկացման ժամանակաշրջանում նախատեսվող անվտանգության միջոցառումների իրականացման կարգի վերաբերյալ տեղեկատվություն և արձանագրվեց, որ դրանում փոփոխության վերաբերյալ ռուսական կողմը նախապես կտեղեկացնի հայկական կողմին:
5. Կողմերը գոհունակությամբ նշեցին, որ երկու երկրները ավարտել են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև ստորագրված <<Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին>> համաձայնագրի ուժի մեջ մտնելու ներհանրապետական ընթացակարգերը: Ռուսական կողմը պատրաստակամություն հայտնեց աջակցել Հայկական կողմին Համաձայնագրի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան միջպետական ուղևորափոխադրումների անվտանգության բարձրացման նպատակով տեղեկատվության փոխանակման համակարգ ներդնելու հարցում:

Կողմերը քննարկեցին Հայաստանի և Ռուսաստանի միջև միջպետական ուղևորա և բեռնափոխադրումների իրականացման ժամանակ <<Վերին Լարսի>> սահմանային

անցակետում արտակարգ իրավիճակների դեպքում այլընտրանքային երթուղիների ձևավորման հարցը:

Հայկական կողմը Ռուսական կողմին փոխանցեց տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության տարածքով ծանրաքաշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների երթևեկության կարգի վերաբերյալ:

Քննարկվեցին միջպետական փոխադրողների կողմից իրականացվող խախտումները և արձանագրվեց, որ դրանք 2018 թվականին առաջին եռամսյակում նվազել են: Ձեռք բերվեց պայմանավորվածություն տվյալների պարբերաբար փոխանակման:

Ռուսական կողմը խնդրեց հայկական կողմի աջակցությունը 2025 թվականին Միջազգային ունիվերսալ <<EXPO 2025>> ցուցահանդեսը Եկատերինբուրգում անցկացնելու նպատակով:

Կողմերը պայմանավորվեցին Միջազգային ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում հայ-ռուսական համատեղ հանձնաժողովի հերթական նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետությունում:

- **ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Նիստի արդյունքում ստորագրվել է Միջազգային ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում հայ-ռուսական համատեղ հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Դավիթ Մելքոնյան

05.05.2018թ.